



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

« 11 » հունիսի 2018թ. N: 32 ք.Գյումրի

ՄԵՍՐՈՊ ԲԶՆՈՒՆՈՒ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ կետի «դ» ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2335-Ն որոշմամբ հաստատված «Ծառայողական գործուղման մեկնած աշխատողների գործուղման ծախսերի հատուցման վճարման կարգի» 3-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի 2018 թվականի հունիսի 8-ի զեկուցագիրը.

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Մ Ե Մ

1. Հայաստան Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Մեսրոպ Բզնունուն գործուղել ք.Երևան՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունից պետության կողմից երաշխավորված անվճար կամ արտոնյալ բժշկական օգնության ու սպասարկման ուղեգրերի ձևաթղթեր ստանալու նպատակով:
2. Գործուղման տևողությունը 1 օր՝ 2018 թվականի հունիսի 11-ին:

Կ.ՍԱՐՈՒԿԱՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

